

ՄԱՇՏՈՑ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍԱՏՈՒՐ ՄԵԱՑԱԿԱՆՅԱՆ

Մասնագետները վաղուց են զբաղվել Մաշտոց անվան ստուգաբանության մասին և առաջադրել մի շարք կարծիքներ: Դրանց մասին մոտավոր և ամփոփ պատկերացում է տալիս Հ. Աճառյանը՝ բոլորն էլ համարելով մերժելի¹: Ըստ այդմ Մաշտոց անվան դիմաց գրել է. «ծագումն անհայտ»²:

Սեր որոնումները համոզում են, որ հայագետների կատարած վերոհիշյալ աշխատանքներն այնքան էլ հեռու չեն հարցի գիտական լուծումից և կարող են օգտակար համարվել՝ խնդրի հետազոտությունը շարունակելու համար: Ուշագրավ են հատկապես Ս. Պարոնյանի, Ղ. Ալիշանի, Գ. Ֆնտզյանի և Ն. Ադոնցի եզրակացությունները, որոնց համաձայն Մաշտոց անվան հիմքում ընկած է մաշտ թրմատը՝ կապված մազդ արմատի ու Մազդակ անվան հետ: Այսպես, օրինակ, Ն. Ադոնցը գրում է. «Եթե ենթադրենք, որ Մաժդոցի նախնական հնչյունը Մազդոց է... կարող ենք նույնացնել իրանական Mazd-ak անվան հետ, հայերեն -ոց հայտնի մասնիկի հավելումով»: Շարունակելով զարգացնել այս միտքը, նա գտնում է, որ «Մաշթոցի խնամությունը Mazdak-ի հետ ավելի քան հավանական է Մաշդոց և Մաժդոց և Մազդոց ձևերի հաջորդական ձայնափոխությամբ»:

Պետք է ասել, սակայն, ոչ Ն. Ադոնցին, ոչ էլ մյուս հայագետներին չի հաջողվել գիտականորեն հիմնավորել լեզվաբանական այն օրինաչափությունը, որի համաձայն մազդ-արմատը վերածված լինել մաշտ-ի: Այստեղ է ահա, որ հիմնականում կանգ է առել Մաշտոց անվան ուսումնասիրության գործը: Եվ հենց այստեղ է, որ մեզ օգնում են սովետական արևելագետների վերջին տասնամյակներում կատարած հետազոտությունները: Զիշտ է, նրանք չեն զբաղվել Մաշտոց-Մազդակ հարաբերության քննությամբ, սակայն նրանց հետաքրքրել է նույն Մազդակ անվան հետ կապված Մաշդակու և նման ուրիշ անունների քննությունը: Նրանք պարզել են, որ մաշդ (մաշտ) արմատով սկսվող անունները սերել են Մազդակ անունից: Ի. Դյակոնովն այդ հիման վրա հանգել է այսպիսի ընդհանրացման. «mašda-ն mazda-ի միանգամայն բնականոն վերարտադրությունն է»³:

Հետազայում այս կարծիքն ավելի է հիմնավորվել հատկապես է. Գրանտովսկու ուսումնասիրություններում: Նա շրջանառության մեջ է դրել մաշդ արմատով սկսվող նոր անուններ, ավելի է խորացրել Ի. Դյակոնովի կար-

1 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 306—311:

2 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 314—315:

3 «Մեսրոպ Մաշտոց» (հոդվածների ժողովածու), Երևան, 1962, էջ 203:

4 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 222, 372:

ծիքը, պնդելով, թե, այն անունները, որոնց հիմքում ընկած է մաշդա-ն, կանխադրված են Մազդայի պաշտամունքով⁵:

Ինչպես տեսնում ենք, հրապարակի վրա է մի կարևոր բացահայտություն, որի համաձայն մազդ արմատը հավասար է մաշդ արմատին: Հիմքը՝ նույն մազդ-ն է՝ կապված նույն Մազդակ (Mazdak) անվան հետ, այսինքն՝ այն անվան, որի օգնությամբ Գ. Ֆետգյանը, Ն. Ադոնցը և ուրիշներ նույն սկզբունքով (մաշդ=մազդ) փորձում էին բացատրել Մաշտոց անունը: Եվ լեզվաբանական այն օրինաչափությունները, որ չկարողացան բացահայտել հայագետները, բացահայտվեցին արևելագետների կողմից:

Այսպիսով, Մաշտոց անվան բացատրությունը ևս կարող ենք լիովին հիմնավորված համարել, պնդելով, թե այն ստացվել է մաշտ արմատից և կապված է մազդ արմատի ու Մազդակ անվան հետ: Ըստ այսմ, Մաշտոց (Մաշդոց) անունը՝ Մաշդակու և մաշդ արմատով սկսվող մյուս անունների հայկական երկվորյակներից է:

Այստեղ, բնականաբար, առաջանում է այն հարցը, թե ինչպե՞ս կարող է մ. թ. V դ. հայտնի դարձած Մաշտոց անունը երկվորյակ համարվել մ. թ. ա. VIII դ. հայտնի Մաշդակու և համարմատ այլ անունների, երբ նրանց միջև ընկած է ավելի քան 1100 տարի: Ի՞նչ փաստեր կան այդ ժամանակամիջոցը Մաշտոց անվամբ լրացնելու համար: Բարեբախտաբար, կան նաև այդպիսիները: Անդրադառնանք դրանց:

Պետք է ասել, որ Մեսրոպ Մաշտոցն առաջին հայ գործիչը չէ, որ կոչվել է Մաշտոց: Հայտնի է, որ նրանից շուրջ կես դար առաջ այդ անունով է կոչվել Սյունյաց Մաշտոց եպիսկոպոսը՝ օծված հայոց կաթողիկոս Ներսես Մեծի (353—373) կողմից⁶: Դա ինքնին վկայում է, որ Մաշտոց անունը հեղինակության հեռուներից և հետագայում՝ քրիստոնեական դարերում, աստիճանաբար դուրս մղվել շրջանառությունից:

Հաջորդ փաստը հայոց ծիսարանի Մաշտոց անունն է: Կարծիք կար, թե այն Մաշտոց է կոչվել Մեսրոպ Մաշտոցի անվամբ: Եղել են նաև հակառակը պնդողներ: Հարցի հիմնական քննությունը կատարել է Հ. Աճառյանը և փաստարկել, որ Մաշտոց ժողովածուն Մեսրոպ Մաշտոցին կամ որևէ հեղինակի չի կարող վերագրվել⁷: Հարցին ճիշտ են մոտեցել Ս. Պարոնյանը, Ղ. Ալիշանը և ուրիշներ, գտնելով, որ այդ ծիսարանը և նրա անունը նախաքրիստոնեական ժամանակներից են գալիս և կապվում են մազդ-ային բնույթի պաշտամունքների հետ: Այսպես, Ղ. Ալիշանը, խոսելով հեթանոսական ժամանակների մասին, գրում է. «Եթէ ի մեհեանս պատմական գրուածք պահուէին, ո՞րչափ ևս առաւել Միսականք»⁸: Ըստ այսմ, նա փորձում է կապ տեսնել մի կողմից հայոց Մաշտոց ծիսարանի (անշուշտ, նկատի ունենալով նրա նախնական վիճակը), իսկ մյուս կողմից՝ Զևս և Արամազդ աստվածների անունների միջև⁹: Որ միջնադարում Մաշտոց ժողովածուն նաև ծիսարանի իմաստով է ընկալվել և չի բխեցվել Մաշտոց անունից, այդ մասին վկայու-

⁵ Զ. А. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, էջ 255.

⁶ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 314.

⁷ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 319—326.

⁸ Ղ. Ալիշան, Հին հատար, Վենետիկ, 1895, էջ 447.

⁹ Նույն տեղում:

թյուն կա Երեմիա Մեղրեցու անունով հայտնի «Բառգիրք Հայոցում»։ Այստեղ Մաշտոցը բացատրված է իբրև «օրէնք կամ հաւաքած բան», այսինքն՝ օրենքների հավաքածու¹⁰։ Այս և նման պարագաները խոսում են Մաշտոց ծիսարանի և նրա անվան ոչ միայն հեթանոսական, այլև այնպիսի ավանդական հնության մասին, որը չէր կարող ոչնչացվել քրիստոնեության կողմից, այլ կարող էր միայն վերախմբագրվել և լրացվել ըստ նոր ըմբռնումների։ Չմոռանանք, որ քրիստոնեական գաղափարների հիմքում էլ հեթանոսական պատկերացումներն էին իշխում։

Երրորդ փաստը, որն ավելի քան համոզիչ է դարձնում Մաշտոց անվան և նրա տարբեր առումների նախաքրիստոնեական ծագումը, հայոց գերագույն աստծու Արամազդի անունն է, որի հիմքում ևս ընկած է նույն մազդ արմատը և հիմնականում պաշտամունքային միեկնույն բնույթը՝ ինչ Մազդակի։ Իսկ որ Մազդակն ու Արամազդը երկվորյակային նույնություններ են, դա ինքնին հասկանալի է։ Արդ, եթե հին է Արամազդի պաշտամունքը հայ իրականության մեջ և եթե նույն մազդ արմատն է ընկած Մաշտոց անձնանվան և Մաշտոց ծիսարանի անվան հիմքում, պարզ է, որ նրանք կարող էին նույնքան հին լինել, որքան Մազդակը, Մաշդակուն և համարմատ մյուս անունները՝ հայտնի մ. թ. ա. VIII դ.։

Այստեղ բացառիկ նշանակություն է ստանում Մովսես Խորենացու վկայությունը Հայաստանում պտղաված չորս Արամազդների մասին, որոնցից հզորն ու նախապատվելիմ համարվել է Կունդ Արամազդը։ Է. Գրանտովսկին, խորամուխ լինելով Անուրամազդա, Մազդակ, Մաշդակու և նման ուրիշ անունների ուսումնասիրության մեջ, քննում է նաև Մովսես Խորենացու վկայությունը, գրելով. «բայց առանձնապես կարևոր է Մովսես Խորենացու հաղորդումը (I, 31) միեջրիստեանեական Հայաստանում Արամազդին չորս տեսով (կերպարով) կամ չորս անունների տակ պաշտելու մասին... Նման համատեղության փոխառությունը ինչպիսին Կունդ Արամազդն է, կարող էր եղած (արված) լինել միմիայն մազդեիզմի կազմավորման միեջրադաշտական ձևերից (...Հայոց բարձրավանդակում՝ արդեն մ. թ. ա. VIII դարում)»¹¹։

Այսպիսով, տեսնում ենք, որ Մաշտոց անվան հին լինելու, նրա ծագումն առնվազն մ. թ. ա. VIII դ. սկսված համարվելու համար էլ կան բավարար հիմքեր։

Վերևում քննված փաստերի շարքը խիստ թերի կլինեն, եթե չանդրադառնալիք նրանց օրգանական շղթայի կարևոր օջակներից մեկը հանդիսացող Բագ Մաշտու կամ Բագ Մաստու անվանը։ Մասնագետներն ավելի վաղ են նկատել այդ և Մազդակ անունների կապը։ Ուշագրավ է, օրինակ, Գ. Մելիքիշվիլու մեկնաբանությունը՝ հենված Պ. Ռոստի և ուրիշների փաստարկումների վրա։ Ըստ այդմ, հատուկ քննությամբ ցույց է տրված շժ և ՏՇ հնչյունների փոխառությունը, որն էլ ընկած է համարվել մազդ արմատից մաշտ կամ մաստ առաջանալու իրողության հիմքում¹²։

Է. Գրանտովսկին, այս և այլ մեկնաբանությունների զարգացմամբ, ավելի հանգամանորեն է բացահայտել շժ—Տժ—սժ—սՏ և նման այլ ձայնափո-

¹⁰ «Բառգիրք Հայոց», աշխատասիրությամբ Հ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 209.

¹¹ Э. А. Грантовский, *ևշվ. աշխ.*, էջ 289.

¹² Г. А. Мелikianшвили, *Напри-Урарту, Тбилиси*, 1954, էջ 161.

խոսքի թույլությունների օրինաչափությունները՝ վկայակոչելով ասուրական սեպագրերից և հին հունական աղբյուրներից քաղված բաղմաթիվ անուններ ու բառեր¹³։ Բոլոր դեպքերում մասնագետները նկատի են առել իրանական բառերի տառադարձությունները՝ ասուրական սեպագիր արձանագրություններում։ Հանգամանորեն բացատրված են ոչ միայն առկա փաստերն ու համապատասխան լեզվաբանական օրինաչափությունները, այլև պատմական կոնկրետ հիմքերն ու փոխառնությունները։ Մեղ համար առանձնապես արժեքավոր են «Իրան. S, § >ակկադ. §, S.», «Իրան. S>, ակկադ. Z, իրան. Z> ակկադ. S կամ (accNP) S» ձայնափոխությունների, ինչպես նաև §(S)> Z հնչյունների քննությունները։ Վերջին երևույթի մասին հեղինակը գրում է. «Հարկ է հատկապես կանգ առնել Zd-ի խմբում իրանական Z-ն §(S)-ի միջոցով փոխանցման վրա»¹⁴։

Պատմական հիմք են համարվել ասուրա-իրանական փոխառնություններն ու համատեղ կենցաղավարությունը՝ Ուրարտուի, Ասորեստանի, Միդիայի և Իրանի սահմանամերձ գոտիներում։ Այդ հիմքը Մուսասիր-Ուրմիայի տարածքում վերաբերում է ավելի շուտ հայկական իրականությանը, որովհետև հայ-ասուրական շփումները, անգամ ամբողջական հատվածների միաձուլման և ասորեստանցիների խոշոր հատվածների հայանալու մասին եղած տվյալներն այդ են վկայում¹⁵։

Այս առումով առաջին պերճախոս փաստը Աստվածաշնչով և Մովսես Խորենացու վկայությամբ հաստատվող այն դեպքերն են, որոնք կապված են Ասորեստանի Սենեքերիմ թագավորի սպանության և նրա որդիների դեպի Հայաստան փախչելու ու այնտեղ ամրանալու պատմության հետ։ Դրանց հիման վրա «Հայ ժողովրդի պատմության» բաղմահատորյակում ասված է «...Հայաստանում ապաստանած ասորեստանյան թագավորի սպանողներից մեկին, այն է Սանասարին՝ «մեր քաջ նախնի Սկսյորդին ընկեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի հարավ-արևմտյան կողմում, նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչվող լեռը»։ Հայկական էպոսը նույնպես հաղորդում է այդ իրադարձության մասին և Սանասուն կամ Սասուն գավառի անվանումը սերում է այդ Սանասարի անունից։ ...Ուշագրավ է, որ Խորենացին այս Սանասարի սերունդներից է համարում Աղձնյաց աշխարհի բղջիկներին...»¹⁶։

Բացառիկ կարևորություն ունի այն փաստը, որ մ. թ. ա. 521—520 թվականներին աքեմենյան պետության դեմ բռնկված հայկական ապստամբությունների տեղերը՝ Զուգախիա, Տիգրա, Ունյամա, Իգալա և Առախյառա. գտնվելիս են եղել հին Ասորեստանից հյուսիս, պատմական Հայաստանի Աղձնիքում ու Կորճայքում և կամ դրանց հարևան շրջաններում¹⁷, ուր, անշուշտ, մեծ թիվ պիտի կազմած լինեին նաև ասուրական պետականադուրկ

¹³ Յ. Ա. Грантовский, նշվ. աշխ., էջ 93—98, 249—259,

¹⁴ Նույն տեղում, էջ 93—98,

¹⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 426—428,

¹⁶ Նույն տեղում, էջ 427,

¹⁷ Հ. Մանանդյան, Երևան, հ. Ա, 1977, էջ 59,

զանդվածները: Վերջապես հիշենք ասուրական բառապաշարի առկայությունը հայոց լեզվում¹⁸:

Այսպիսով, եթե արևելագետները նկատի են ունեցել լոկ Անուրա-Մազդա կամ Մազդակ իրանական անունից ասուրական տառադարձությամբ մաշտ արմատով անունների առաջացման հնարավորությունը, ապա մենք բավարար հիմքեր ունենք հենց ուղղակի հայ-ասուրական առնչություններով մեկնաբանելու Արամազդ-Բագ-Մաշտու-Մաշտոց-Մաստոց անվանաձևերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում: Այս առումով բացառիկ արժեք են ներկայացնում նաև հայերենում պահպանված մի քանի տասնյակի հասնող այն բառերը, որոնց հիմքում ընկած են մազդ, մաշտ, մաստ արմատները: Դա խիստ ուշագրավ երևույթ է, մասնավորապես որ իրանական լեզուները դուրկ են նման հարստությունից: Այստեղ, ինչպես պնդում են մասնագետները, մազդ արմատն է միայն առկա, այն էլ ոչ թե առանձին, այլ Անուրա-Մազդա անվան կամ նրանից սերած անունների մեջ¹⁹: Դրանով էլ որոշ չափով դժվարացել է Անուրամազդա, ուստի և Արամազդ անունների իմաստը բացահայտելու հնարավորությունը: Հայոց լեզվում հանդիպող վերոհիշյալ բառերը, ընդհակառակը, գալիս են օգնելու նաև այդ գործին: Ուստի հարկ է անդրադառնալ նշված բառերին:

Այդ բառերը հիմնականում նկատված, հավաքված և մեկնաբանված են հայոց լեզվի տարրեր բառարաններում, հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանների ընդր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում և Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»: Դրանք զետեղված են տարբեր բառահոգվածների տակ և արժանացած հիմնականում ճիշտ (մասամբ՝ ոչ ճիշտ) մեկնաբանությունների: Այսպես, ճիշտ են Հ. Աճառյանի քննած Մազդ բառահոգվածում այդ բառի «պինդ, խիստ, ամուր», Մեստ բառահոգվածում՝ «պինդ, ամուր, հաստատուն», Մազդ բառահոգվածում զետեղված մազդուքիւն, մաստուքիւն, մաստնութիւն բառերի՝ «դիմացկունություն», «հաստատություն», «ամրություն» մեկնաբանությունները²⁰: Ըստ այսմ, ճիշտ է հեղինակը, երբ Մաստ բառահոգվածին կից նշել է «Մաստ տե՛ս Մազդ»²¹:

Մոտավորապես ճիշտ են նույն Մազդ բառահոգվածի տակ մաստ ասեղ հասկացությանը տրված «մեծ կամ հաստ ասեղ», իսկ մաստուռ (մաստ ուռ) բառին տրված «երկաթե մեծ մուրճ, կռան» բացատրությունը: Տվյալ դեպքում և՛ ասեղն է մեծ ու հաստ, և՛ կռանն է մեծ: Բայց երկու դեպքում էլ նրանցից անբաժան են ամրության, պնդության, դիմացկունության, ուժեղության գաղափարները, որոնք ընկած են վերոհիշյալ մազդ, մեստ, մազդուքիւն, մաստուքիւն, մաստնութիւն բառերի հիմքում:

Որպես ճիշտ չբացատրված բառի օրինակ կարելի է հիշել միևնույն Մազդ բառահոգվածում բերված «Հա՛յ իմ մազդ ուռի մորճիկ» տողի մազդ

18 Գ. Ղափանցյան, Ասուրա-բաբելական բառեր հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1945, № 3-4, էջ 7-45), Հ. Աճառյան, Ասուրերենի ազդեցությունը հայերենի վրա («Հայոց լեզվի պատմություն», հ. I, Երևան, 1940, էջ 194-201):

19 Յ. А. Грантовский, նշվ. աշխ., էջ 254-255:

20 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 222, 305:

21 Նույն տեղում, էջ 265:

բառի «հաստ» մեկնաբանությունը: Հստ երևույթին, այդ տպավորությունն ստացվել է նույն բառահոգվածում քննված մաստ սուսեղ և մաստուտ (մաստուռ) բառերի ազդեցությամբ: Տվյալ տողում, սակայն, նկատի է առնված խաղողի վազի դալար շիվը, որի հետ էլ համեմատված է դեռատի աղջիկը: Այստեղ բոլորովին տեղ չունի հաստ հասկացությունը՝ որպես գլխավոր հատկանիշ. ընդհակառակը, ենթադրվում է աղջկա բարակ, ձկուն, դալար իրանի գաղափարը²²: Հենց դրանով էլ, տվյալ դեպքում, գործ ունենք մազդ բառի մի ուրիշ առումի հետ, որը կարող է հատուկ մեկնաբանության: Ճիշտ այդպես հատուկ բացատրության կարիք ունի Մաստ բառահոգվածի «բողբոջալ և մաքրալ գարի գարեջուր պատրաստելու համար» մեկնաբանությունը, որի մասին Հ. Աճառյանը գրել է. «կազմությունը և ծագումը ինձ անհայտ է»:

Բերված օրինակները համոզում են, որ Մազդ և Մաստ բառերի իմաստը՝ փինդ, դիմացկուն, ամուր, հաստատուն, կայուն հասկացություններն են: Ուշագրավն այն է, որ դրանք մի կողմից վերաբերում են առարկաների բնական հատկություններին, իսկ մյուս կողմից՝ մարդկային ֆիզիկական, մտավոր և հոգևոր հատկություն-ընդունակություններին: Առաջինների մասին տեսանք վերևում, երկրորդների կապակցությամբ հիշենք Գրիգոր Տաթևացու տողերը, որ զետեղված են Հ. Աճառյանի վերոհիշյալ բառարանի Մազդ բառահոգվածում: Միջնադարյան կրոնա-հոգևոր ըմբռնումների համաձայն, Գրիգոր Տաթևացին գրում է. «Հեզութին նույն է ընդ մաստութին. դի ասեն թէ մաստութին է որ ոչ զգայ զդառնութին ինչ սգոյ. և մաստութինն. նույն է ընդ համբերութեանն. զի համբերութինն է տևում մարմնաւոր նեղութեանց. իսկ մաստութինն տևումն նախատանաց (իբր «դիմացկունություն»)»:

Այստեղ շատ որոշակի պատասխան է տրված մեզ հետաքրքրող հարցին, մանավանդ որ ընդգծված են դիմացկունության, պնդության, հաստատության գաղափարները: Առավել կարևորն այստեղ՝ հոգևոր առաքինությունների հարցն է, որը պահանջում է դիմանալ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեկան տանջանքներին, ունենալ համապատասխան պատրաստվածություն ու դաստիարակություն:

Հիշյալ ուշագրավ խրատականի էությունը լրիվ հասկանալի չի լինի, եթե չխորանանք նրա պատմության մեջ՝ կապված առավել հնից եկող ընդհանուր դաստիարակության եղանակների հետ: Ղ. Ալիշանը, խոսելով այդ մասին, ուշադրություն է հրավիրում հեթանոսական ժամանակների տանջանաց աստիճանների վրա, որոնք ընդ ժամանակաց աշակերտության կամ նվիրապետության կազաց զուգվին»։ Որպես վաղ ժամանակներին վերաբերող վկայություն, նա հիշում է Միհր աստծուն նվիրվել ցանկացողին առաջադրված «թուով ութսուն» տանջանաց աստիճանները հաղթահարելու մասին Նոննոսի հետևյալ տողերը. «...քանզի որք սովաւ կատարեալ կամէին լինել՝ տանջանաց կարօտանային, ըստ աստիճանաց ի վեր ելեալք, ի թեթևագունիցն տանջանաց սկսեալ՝ ի դժնդակագոյնսն կատարէին. յառաջագոյն»

²² Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 332, «Ուռ— խաղողի որթի ճյուղ... Ուռ միջկունք...— ձկուն մեջք, ուռամիջակ, Այստեղ նկատի է առնված նաև քննվող տողը («Հայ իմ մաղդ ուռի մորճիկ...», էջ 125): Նույն իմաստով է նաև «Բո մեջքդ է քան զուռ քառակ» տողը (էջ 107):

սովորվ ճնշել զանձինս՝ իբրև աւուրս 50 և յայնմ ժուժկալք՝ ի քերանս՝ արկանէին աւուրս երկու, ապա ի ձեան կացուցանէին աւուրս 20. յետոյ ի հուր անցուցանէին...» և այլն²³:

Այստեղից, ինքնաբերաբար, բացվում են դեռևս նախնադարյան համայնական կարգերում ձևավորված և մինչև ուշ միջնադար, իսկ տեղ-տեղ էլ՝ ընդհուպ մեր օրերը գոյատևած հասակային դասերի, հատկապես երիտասարդական կազմավորումների ու համապատասխան դաստիարակությունների պատմական իրողությունները: Երիտասարդները դաստիարակվում էին առանձին՝ կոփվելով թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես. յուրացնում էին նաև տոհմի դիցաբանության և համապատասխան ծեսերին վերաբերող գիտելիքները: Արքունքի հասնելիս նրանք համարվում էին կատարյալ ուժեր՝ արտադրական հասարակություն փոխադրվելու համար: Սահմանված էին բազմաստիճան մրցույթ-քննություններ, որոնցից անցնողներն ստանում էին նոր անուն, ինչպես նաև ամուսնանալու և արտադրությանը մասնակցելու իրավունք: Այդ քննությունների ժամանակ, որոնք ըստ էության մկրտության և կնուճի արարողություններ էին, հաճախ քննվողներին թաղում էին հողի մեջ, վրան կրակ վառում և այնտեղից հանելով, թոցնում բոցերի միջից: Հաճախ էլ նրանց ենթարկում էին անդամահատության, մաշկահատման, թլփատման, մարմնի մեջ սրածայր առարկաներ մտցնում, իսկ ամուսնանալուց առաջ խախտում աղջիկների կուսությունը և այլն: Նրանք քննություններ էին հանձնում նաև ծիսական պարերի, կիրառական արվեստի զանազան ճյուղերի և նման այլ գիտելիքների գծով²⁴:

Այս բոլորը պայմանավորված էին առողջ, գիտուն, բանիմաց, տոկուն և լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մտահոգությամբ և համապատասխանում էին ժամանակի արտադրատնտեսական, ռազմաքաղաքական, ինչպես նաև կրոնադիցաբանական կարգ ու կանոնին, պատկերացումներին: Այդ կարգ ու կանոնը խիստ անհրաժեշտ էր հասարակության կերպարանքը անաղարտ պահելու համար: Դրանք սրբազան կարգեր էին:

Նկատի առնված հեռավոր ժամանակներում հասկանալի պատճառներով պիտի ձևավորվեին համապատասխան երևակայական ոգիների, տոհմի նախնիների, հերոս էակների գաղափարակիրներ, որոնց օրինակով պիտի դաստիարակվեին սերունդները: Այս տեսակետից ուշագրավ են այն փաստերը, որոնց համաձայն համապատասխան էակներն ու ոգիները հայկական ու իրանական ցեղերի մոտ կոչվել են Մաստ, Մաստըն, Մազդ անուններով: Հանրահայտ է, օրինակ, որ անցյալի դիցաբանական հերոսները պատկերվել են իբրև փոքր հասակից բնության ուժերի, վայրի կենդանիների միջավայրում մեծացած էակներ: Նման պատկերացում է եղել հատկապես արքաների, առաջնորդների մասին, որոնք նույնպես աստվածային ուժեր են համարվել: Այդպիսի պատկերացում է եղել նաև պարսից Կյուրոս արքայի մասին: Նախաքրիստոնեական աղբյուրներից քաղված մի վկայության մեջ ասվում է, որ Եփրոս արքայն պարսից, գոլով արտադրեցեալ յանտառի իմիք ի մահ, շուն ոմն էշ

23 Ղ. Ալիշան, Հին հատար, Վենետիկ, 1895, էջ 284—285:

24 Այդ դասերի մասին կարելի է տեղեկանալ հետևյալ աշխատություններից «Исторические корни волшебной сказки, М., 1946, В. Я. Пропп, С. П. Толстов, Древний Хорезм, Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 389—392 և այլն:

դիեցուցեալ սնոյց զնա, վասնորոյ ի զարգանալն իւր եղև հզօր պատերազմական և ամենեւին համանման մաստեաց»²⁵։ Ըստ այսմ, ինքը՝ հզօր Կյուրոսը ոչ թե մաստ է համարվում, այլ «համանման մաստեացն», այսինքն՝ մաստ էականերին նմանված հերոս։ Պարզ է, որ աստվածային արքան այստեղ համեմատված է ոչ թե երկրային հերոսների հետ, այլ՝ երկնային։

Այս առումով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հայկական Թուխ Մանուկ կոչված գերբնական էակներին նվիրված երգերը՝ գրի առնված միջնադարում։ Դրանք (Թուխ Մանուկները) այն երևակայական ուժեղն էին, որոնց հիշատակը պաշտվել է գրեթե ամեն գյուղում կառուցված և Թուխ Մանուկ կոչված սրբավայրերում²⁶։ Ահա այդ թուխ Մանուկներին նվիրված երգերից մեկում դիցաբանական աղջիկը, դիմելով իր հետ ամուսնանալ ցանկացող թուխ երիտասարդին, ասում է. «Թուխ մասարն դու, ի թուխս ի յուս»։ Ապա թելադրվում է դժվար իրականանալի պահանջ, թուխ տղան այդ նպատակով սլանում է որսադաշտ, գրկում խրկադու կենդանու ձագ, նստում քաջ արծվի թևին, բարձրանում օդ և սուրալով հասնում աղջկան ու տիրում նրան²⁷։ Ահա թե ինչպիսին է թուխ մասարն գերբնական էակներից մեկի կերպարը՝ ժողովրդական հնաբույր երգերում։

Ինչպես տեսնում ենք, մաստ էակաները կապվում են հին պատկերացումների համաձայն ստեղծված հասակային դասերի հետ, որից քննությանմբ անցնելով, նրանք ամուսնանում են։ Ուստի մաստ կամ մասարն հասկացությունների մեջ հատուկ տեղ ունի արքունքի հասակը։ Նրանք ըստ ամենայնի են հասուն, կատարյալ՝ արտադրական հասարակություն փոխադրվելու և արտադրական գործողություններին մասնակցելու համար։ Արքունքի հասակն է հղել այն հիմնական օղակը, որով հասարակության երկու հիմնական հատվածները շղթայվել են միմյանց։

Ահա այստեղ է, որ հերթը հասնում է Հ. Աճառյանի վկայակոչած «Հալիմ մազդուուտի մորճիկ» տողում աղջկա մազդ կոչվելու հարցին։ Այդ աղջիկն էլ պատկանում է մաստ-մազդ-մաշտ էականի թվին, համեմատվում է նրանց հետ։ Նա նմանեցված է խաղողի վազի դալար շիվի («մորճիկի»), որը պատրաստ է պտղաբերության, այսինքն՝ հասած է արքունքի ժողովրդական մտածողությանմբ այստեղ ավելի շուտ շիվն է մազդ կոչված, քան աղջիկը, որովհետև ստեղծված պատկերավորության հիմքում ընկած է մորճիկի (ընձյուղի շիվի, ոստի) գաղափարը։

Ահա այս մտածելակերպով է, որ ծլած և գարեջրի համար պատրաստված գարու հատիկը ևս կոչվում է մաստ։ Հատիկն էլ, խաղողի վազի շիվն էլ, ամուսնանալու և արքունքի հասած աղջիկն էլ հավասարապես մաստ-մազդ վիճակումն են գտնվում և այդ պատճառով էլ կոչվում են մաստ կամ մազդ։ Դա մտածողության նախնական վիճակի արդյունք է, որի արմատները թաղված են հեռավոր ժամանակների խորքերում։ Ուշագրավ է, որ խեթամիտանիական դաշնագրում (մ. թ. ա. 1400—1350 թթ.) առկա է մաստ բառը՝ կապված ծլած գարու հատիկի (ածիկի) հետ. «...իբրև ծլած գարի մաստ (Malz)»

²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3205, Թ. 39ր։

²⁶ Ա. Մնացականյան, «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 189—204)։

²⁷ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 113—114։

իր ծիւղը մեկտեղ թող ձեղ քաղեն»²⁸ կամ «...ձեղ ոչնչացնեն ինչպես մաստ (զարու հա՛) իր ծիւղը թող ձեղ քաղեն»²⁹։ Նույն ժամանակներից և նույն աղբյուրներից հայտնի կանացի Mastiga³⁰ անունը ևս, մեր կարծիքով, ստեղծված է մաստ արմատից։

Այսպես, ուրեմն, կարելի է ասել, որ հնում, իրական և երևակայական հիմքերի վրա, հնդեվրոպական և հնդիրանական ցեղերի մոտ հատուկ զարգացում է ապրել մազդ-մաստ հասկացությունը։ Մի կողմից այդպես են կոչվել պինդ, ամուր, կարծր, դիմացկուն առարկաները, մյուս կողմից՝ առողջ ու ուժեղ, խելոք ու կատարյալ, արքունքի հասած երիտասարդները։ Դրանցից էլ, աստիճանաբար, սերվել են դերձգուր, գերիմաստուն, ամենակառու ու ամենակատարյալ այնպիսի մազդ աստվածների կերպարները, ինչպիսիք են իրանական Ահուրա Մազդան, հայաստանյան և հայկական Բագ Մաշտուն և Արամազդը։

Հարց է առաջանում, ո՞րն է մաղդ-մաստ (ապա նաև մաշտ) արմատի այն նախնական հիմքը, որից առաջացել են դրանք։ Այս հարցին դեռևս ընդունելի պատասխան չկա, շնայած առաջ են քաշված տարբեր կարծիքների։ Ուշագրավ է իրանական Ահուրա Մազդա աստծու անվան համեմատությունը՝ հնդկական medhā (իմաստություն), medhas (իմաստուն) բառերի հետ, որոնց, սակայն, իրաներենում համազոր է xratu- բառը, որը չի օգտագործված³¹։ Հ. Աճառյանը Մազդ բառահոդվածի մեջ հավանական է համարում «իրան. māsta «մեծ» արմատը, որը համապատասխանում է զնդ. mastia-, masit «ընդարձակ, տարածուն, մեծ» գաղափարին. իսկ մեսա բառի համար հիշում է Կարստի առաջարկած «սումեր. meš, mis «բազմություն» արմատը։ Գ. Զահուկյանը, Մաշտոց անվան կապակցությամբ, ցույց է տալիս հնդեվրոպական mad «թաց, խոնավ. յուղոտ, հյութեղ», mad-to- (=մաշտոց) արմատը, միաժամանակ հավանական համարելով բառի իրանական ծագումը³²։

Իրերի այս դրույթան մեջ, մեր կարծիքով, ճիշտ կլինեն հնդեվրոպական niazdo-s բառին դիմելը, որին միանգամայն հարազատ են Ահուրա Մազդայի անվան Զենդ—Ավեստայում հանդիպող mazdāo, mazdātha, mazdavara և նման այլ ձևերը³³։

Mazdo-s արմատը հիմք է համարվել գերմաներենում (նաև անգլերեն, ֆրանսերեն և ուրիշ լեզուներում) առկա մաստ բառի և նրանով ստեղծված բարդությունների համար։ Ըստ որում, այդտեղ մաստ են կոչվել նավի կայմը, փողոցի սալարկը, ամրացված բեմահարթակը և այլն³⁴։ Դժվար չէ նկատել, որ այստեղ էլ առկա է մաստ բառի արտահայտած ամուր, կայուն, պինդ, դիմացկուն, հաստատուն գաղափարը։ Խնդիրն ավելի անառարկելի է դառ-

²⁸ Ա. Խաչատրյան, Հայաստանի անպարզական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 490։

²⁹ Նույն տեղում, էջ 483։

³⁰ В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, էջ 90։

³¹ Э. А. Грантовский, Եղվ. աշխ., էջ 254—255։

³² Գ. Զահուկյան, Հայերը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 74։

³³ F. Justi, Handbuch der Zendsprache. Leipzig, 1894, էջ 323։

³⁴ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern-München, 1959, էջ 701—702։

նում, երբ հաշվի ենք առնում հայոց լեզվում հանդիպող մազդ-մաստ-մաշտ բառերի նաև այն առումները, որոնց վրա վերևում կանդ շառանք։ Հիշենք դրանցից մի քանիսը։

Վերևում ծանոթացանք մեստ «պինդ, ամուր, հաստատուն» արմատին, բայց չնշեցինք, որ դրանից ունենք նաև մեստիլ բառը՝ «պինդ հաստատվիլ, ամրանալ» իմաստով։ Ըստ այդմ՝ փիլոնի լուծմունքում հանդիպում է «մեստեալ մահիճք երկաթիւք», Փավստոս Բուզանդի մոտ՝ հաստամեստ։ Այնուհետև, ունենք մաշտոց բառ՝ գործիքի անվան իմաստով, որից՝ մաշտել կամ մաշտիլ բայ³⁵։ Այստեղ մաշտոցը մետաղյա ամուր գործիք է, որով կարգավորում են անասունների մազերը³⁶։ Սակայն մաշտել բայը կապվում է նաև սուր, գերամուր առարկայով ավելի փափուկ առարկաները կտրելու (և ոչ թե լուկ սափրելու, ճաղատանալու) գաղափարի հետ։ Հիշենք «մանգաղ թուցեալ»-ը, որով իրականացված է «Ջտանց նոցա քակումն և զքարինս և զփայտս մաշտելոյ» անեծքը³⁷։ Նկատենք, որ Հովհան Ոսկեբերանի այս տողերն առնված են Աստվածաշնչից, ուր էլ «մանգաղ թուցեալ»-ի փոխարեն հանդիպում է «գերանդի թուցեալ»³⁸, իսկ Աստվածաշնչի 1906 թ. թարգմանությունում՝ տոմս (գալարափաթեթ՝ գրավոր օրենքի իմաստով)³⁹, որով ավերվում է սուտ երգվողի տունը։ Ունենք նաև մաստել բառ, որը ցույց է տալիս գերկարծր առարկայով, այն է՝ մաստով ավելի փափուկ գործիք սրելու իմաստը⁴⁰։

Այս և այլ բառերի առարկայական պինդ, ամուր, կայուն, հաստատուն, դիմացկուն հատկությունները միանգամայն ներդաշն են mardo-s-ից առաջացած մաստ բառի վերահիշյալ հատկություններին։ Եվ այդ հիման վրա է, որ հայոց լեզվում աստիճանաբար զարգացել են լեզվա-մտածողության արդյունք հանդիսացող այն տարրողունակ բառերը, որոնց մասին խոսվեց վերևում։ Այստեղ անհարկի շէր լինի ուշադրություն հրավիրել նրանց խմբին պատկանող հետևյալ բառերի վրա ևս.

Մաստուն—անձնանուն (գիտուն, լիարժեք, հստուն, կատարյալ)։

Մաշտակ—գյուղի անուն՝ Վանի շրջակայքում։

Մաստարա—Մազդարա—գյուղի կամ սրբավայրի անուն։

Մազդար—Մասսար—բերդի անուն։

Մասունակ—երաժշտական հին եղանակի անուն։

Մեսքուր—մստուր—կույս աղջիկ։

Արամազդի և Աստղկա տուն—կռատան անուն։

Արամազդի գոտի—ծիածանի անուններից։

Արամազդ—թռչունի տեսակ։

Արամազդ—աստղի անուն։

Մաշտենգ—տեսնենք, համբերենք, դիմանանք, նաև՝ գուշակելով իմանանք, կանխատեսություն մար տեղեկանանք։

³⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 262։

³⁶ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 260։

³⁷ Հովհան Ոսկեբերան, Ժառք, Վենետիկ, 1861, էջ 857։

³⁸ Զաքարիա, Ե, 4։

³⁹ Դրան համապատասխան ուսուցիչ թարգմանության մեջ «летит свиток» (Захариа, V, 4)։

⁴⁰ Կ. Գարիկյան, Բառգիրք Սեբաստիո գավառայեզուի, Երուսաղեմ, 1952, էջ 390։

Այստեղ հարկ է առանձին խոսել Մեսրոպ անվան մասին: Չնայած զգալի աշխատանք է կատարված նաև այդ անվան մեկնաբանության գծով, սակայն ընդունելի արդյունք չի ստացվել: Ն. Ադոնցը շրջանառության մեջ դնելով Մաստուրիոս ձևը, զգուշացրել է հեռու մնալ նրա մեջ նաև Մեսրոպ անունը որոնելու գայթակղությունից: Դրան կարող էր մղել Մաստոց ձևը՝ վրացական աղբյուրներից: Այս առումով ուշագրավ է Մաստուրվը ձևը՝ երևան եկած Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի վերջերս Պարսկաստանից նվեր ստացած № 10434 ձեռագրում: Այն 1069 թ. ընդօրինակվել է, հավանաբար, Մեսրոպ Մաշտոցին պատկանած Ավետարանից, որի մասին հիշատակարանում ասված է. «որ էր վկայեալ արինական յամենայն գիտնականաց հայոց, զոր ասէին յաւանդութենէ դրեալ ձեռամբ սրբոյն Մաստուրվբայ վարդապետի և թարգմանչի»⁴¹: Դժվար է ասել՝ Մաստուրվը ձևի հիմքում էլ նույն մաստ արմատն է, որը Մաստրիտեոս անվան, Մաստր կոչումի, Մեստրայիմ անվան ազդեցությամբ հարստացել է Ր տառով, թե՛ դրանք այլ ծագում ունեն:

Անկախ այս փաստից, սակայն, կարող ենք ասել, որ վերևում քննված բառերի խումբն իր ամբողջությամբ ցույց է տալիս նաև զ-ս-շ հնչյունների փոխադարձ կապի ու ձայնափոխության օրինակներ: Այսպես. ունենք՝ Արա Մազդ-Բագ Մաշտու-Բագ Մաստու, Մանդարա-Մաստարա, Մազդար-Մասսար, Մաշտուց-Մաստոց-մաշտել, մաստություն-մաստնություն-մազդություն, մաստ (տղա)-մաստ (էակներ)-մազդ (աղբիկ) և այլն: Դրանք միաժամանակ մտածել են տալիս, որ մենք ասուրական միջնօղակից բացի, կարող ենք հենվել նաև հայոց լեզվի սեփական օրինաչափությունների վրա, և Մաշտոց անունը սերած համարել մազդ-մաստ արմատից՝ հենց հայոց լեզվի օրինաչափությունների համաձայն: Մանավանդ, որ հնարավոր է դառնում հնդեվրոպական նախալեզվի *masdō*-> արմատը համարել ընդհանուր ժառանգություն և՛ հայկական, և՛ իրանական, և՛ ուրիշ ցեղերի համար:

Այսպես ասելով նկատի ունենք այն օրինաչափությունը, որն ըստ Հ. Աճառյանի ձևակերպման, ասում է. «Երբ մի բառ՝ նույն կամ նման ձևով գտնվում է բոլոր կամ գոնե մի քանի իրարից անկախ հնդեվրոպական լեզուների մեջ, նշանակում է, որ նա ուղիղ գծով ժառանգություն է հնդեվրոպական նախալեզվից»⁴²: Այդպիսին է, ինչպես տեսանք, հայոց լեզվում պահպանված մազդ-մաստ-մաշտ արմատը, խեթական մաստ-ը, գերմանական և ուրիշ լեզուներում Յու. Պոկորնու ցույց տված *masl*-ը և ուրիշ փաստեր: Խնդիրն առավել համոզիչ է դառնում, երբ հաշվի ենք առնում իրանական Ահուրա Մազդայի հիմքում ընկած մազդ արմատը և մանավանդ նախալեզվային *masdō-s*-ը: Ըստ այսմ, կարելի է ասել, որ հայկական, իրանական և հնդեվրոպական մի քանի ուրիշ ցեղեր երբեմնի ընդհանուր ընտանիքից ժառանգել են մազդ-մաստ-մաշտ հասկացությունների հետ կապված պատկերացումներ և հետագայում դրանք զարգացրել ուրույնաբար՝ իրենց վիճակված կենսապայմանների համաձայն: Այս իրողությունը մեզ հիշեցնել է տալիս Ֆ. Էն-

41 Ձեռ. № 10434, թերթ 267ր: Այդ մասին «Գրական թերթի» 1973 թ. հունիսի 15-ի համարում հաղորդում է ապագրել Ա. Մաթևոսյանը: Հիշատակարանն ամբողջապես տե՛ս «Էջմիածին», 1976, Բ-Թ, էջ 29—37:

42 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. I, Երևան, 1940, էջ 9:

գելսի հետևյալ տողերը. «Նախնական կրոնական պատկերացումները, որոնք մեծ մասամբ ընդհանուր են ժողովուրդների յուրաքանչյուր տվյալ ազգագրական խմբի հասար, այդպիսի խմբերի տոհմից հետո յուրակերպ զարգանում են յուրաքանչյուր առանձին ժողովրդի մոտ, նայած վերջինիս վիճակված տնտեսական պայմաններին»⁴³։ Այդտեղ էլ մեր առջև բարձրանում է հարցերի մի ամբողջ խումբ, որը խիստ կարևոր նշանակություն ունի առհասարակ պատմագիտության և մասնավորապես հայագիտության համար։

Այսպիսով, Մաշտոց անունը՝ իբրև անձնանուն և իբրև ծիսարանի անուն ծագել է ոչ թե մազդ-մաւտ-մաշտ բառերի սովորական առումներից, այլ Բագ Մաշտու (Արամաղդ) աստծու պաշտամունքից։ Եթե առաջինն արտահայտել է նրա կրողի՝ Բագ Մաշտուի հեռերդ, նրա պաշտամունքին նվիրված լինելու իմաստը, ապա երկրորդը ցույց է տվել համապատասխան ծեսերի, կարգ ու կանոնի տմբողջությունը, ինչպես, ասենք, Մաշդակու և Դեբեմազդեզն հասկացությունները՝ Ահուրամազդայի կապակցությամբ։ Ուստի սխալ կլիներ Մաշտոց անձնանունը ծիսարանի անունից կամ վերջինս Մաշտոց անձնանունից բխեցնելու։ Նրանց ընդհանուր հիմքը՝ Բագ Մաշտու-Արամազդն է։ Այս են հուշում նաև ուրիշ կրոնների և աստվածների առնչությամբ կատարված քննությունները։ Հեռաբար, հայկական ծագում ունի ոչ թե միայն Մաշտոց անունն առհասարակ, այլև՝ Մաշտու-ն, որովհետև մաշտ արմատով հայտնի բոլոր անուններից միմյանց ավելի մոտ ու հարադաս են Մաշտու-ն և Մաշտոց-ը։ Եվ եթե Մաշտոց անունը ծագել է մաշտ արմատից՝ ոչ ածանցի հավելումով (ինչպես Տիրոց, Բարոց և այլն), այնպես էլ նույն եղանակով նրանից առաջացել է Մաշտու-ն՝ ու ածանցի հավելումով։ Եվ դա միանգամայն ներգալն է հայոց լեզվի ներքին օրինաչափություններին։ Այսպես, օրինակ, եթե ունենք հատ-հատու-հատոց-հատել բառերի նույնարմատ շարքը, այդպես էլ ունենք մաշտ-մաշտու-Մաշտոց-մաշտել շարքը։ Եվ եթե ու մասնիկը կոշվել է ուժեղացնելու, սաստկացնելու հատ (հատու) բառի իմաստավորած գաղափարի ուժը, ապա ճիշտ այդպես, այդ նույն նպատակին է ծառայել մաշտ-ու կառուցության մեջ՝ փոխարինելով գեռ- բառին (գեռամուր, գեռմաստ, գեռլուստ, գեռգոր և այլն)։ Այս եղանակով, փաստորեն, Բագ Մաշտու հասկացությունը երևան է եկել իբրև Ահուրա Մազդայի հավասարազոր երկվորյակ։ Եվ եթե վերջինս կապվում է իրանական ցեղերի ու իրանական միջավայրի հետ, ապա առաջինը ենթադրում է հայկական ցեղեր և հայկական միջավայր։ Այս հուշ կարևոր իրողությունը, որը բացահայտվում է առաջին անգամ, կարոտ է առավել պերճախոս ու համակողմանի քննության ու դարգացման, որը, սակայն, այլ հարց է և գուրս մեր ներկա հոդվածի նպատակից։

ЭТИМОЛОГИЯ ИМЕНИ МАШТОЦ

АСАТУР МНАЦАКАНЯН

Резюме

До сих пор имя Маштоц не получило общепринятого объяснения. Разыскания показывают, что правы были Г. Алишан; Н. Адонц и др., усмотревшие в основе этого имени корень *маш*, связанный с понятиями.

⁴³ Տ. էնգելս, *Լուսավոր Ֆրեյերախը և գերմանական կապիկ փոխադարձության վախճանը*, Երևան, 1972, էջ 81—82։

мазд и *маздак*. Эта точка зрения, к сожалению, не получила признания ввиду недостаточного научного обоснования. Однако мнение Н. Адонца можно обосновать посредством тех объяснений востоковедов, согласно которым от слов *мазд* и *маздак* происходили имя *Маштоц* и несколько других имен с корнем *машд*.

Примечательно, что таким же происхождением объясняется также имя божества *Баг Машту* (*Баг Масту*). Исследования выявляют несколько десятков сохранившихся в армянском языке слов, связанных с формами корня *мазд*, *маст*, *машд*. Эти слова дают возможность в новом свете истолковать некоторые вопросы, связанные с именами божеств *Маздак*, *Арамазт*, *Ахурамазда*, *Баг Машту*. В этой связи можно утверждать, что как имя *Маштоц*, так и название сборника церковных обрядов *Маштоц* в армянской действительности связаны с культом божества Баг Машту-Арамазда.

При этом возникает ряд важных вопросов, рассмотрение которых, однако, остается за рамками данной статьи.